

## ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Մենք կատարել ենք «Լքսադրնս Կրնդիտ ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՓԲԸ-ի 2010թ. համապարփակ ֆինանսական արդյունքների մասին (Ձև 1), ֆինանսական վիճակի մասին (Ձև 2), Սեփական կապիտալում փոփոխությունների մասին (Ձև 3) և Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ (Ձև 4) հաշվետվությունների աուդիտ:

Ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատվությունը կրում է կազմակերպության ղեկավարությունը: Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Աուդիտն իրականացվել է Աուդիտորական Միջազգային Ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտները պահանջում են, որ մենք պլանավորենք և կատարենք աուդիտն այնպես, որպեսզի հասնենք բավարար աստիճանի համոզվածության, թե կան արդյոք էական անճշտություններ ֆինանսական հաշվետվություններում: Աուդիտն իր մեջ ընդգրկում է ընտրանքային կարգով իրականացված այն փաստաթղթերի հաշվերնումը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվությունների գումարները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների տեղեկատվության բացահայտումները: Աուդիտը նաև ներառում է հաշվապահական հաշվառման վարման սկզբունքների գնահատումը, ինչպես նաև ֆինանսական և հաշվապահական աշխատանքների պատասխանատուների հարցումը: Մենք վստահ ենք, որ մեր կողմից իրականացված աուդիտը բավարար հիմք է մեր կարծիքի ձևավորման համար:

*Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները ընկերության ֆինանսական վիճակի՝ առ 1-ը հունվարի 2011թ., տալիս են ճշմարիտ և իրական պատկերը և կազմված են ֆինանսական հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին համաձայն:*

31 մարտի 2011թ.

Աուդիտոր՝

Ս. Աքրահայան



Աուդիտ Սերվիս ՍՊԸ-ի տնօրեն՝

Գոռ Դավթյան